ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 147 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԷՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Էրիկ Գրիգորյանին (այսուհետ՝ լիազորված անձ) երեք տարի ժամկետով լիազորել՝

1) Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալ օտարերկրյա պետությունների կառավարությունների ներկայացուցիչների, «Կլիմայի փոփոխության մասին» Միավորված ազգերի կազմակերպության շրջանակային կոնվենցիայի քարտուղարության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության քարտուղարության, միջազգային և առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև այլ շահառուների հետ հարաբերություններում «Կլիմա-արտաքին պարտք» հաշվանցման մեխանիզմի շրջանակներում.

2) Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալ պարտատեր օտարերկրյա պետությունների հետ բանակցություններում արտաքին պարտքը

հաշվանցելու և Հայաստանի Հանրապետության ներսում կլիմայական հարմարվողականության և մեղմման ծրագրերի ֆինանսավորման համար օգտագործելու նպատակով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված լիազորություններն իրականացնելու ընթացքում լիազորված անձն իրավասու է՝

1) մշակել Հայաստանի Հանրապետության համար «Կլիմա-արտաքին պարտք» հաշվանցման մեխանիզմի կիրարկումը հնարավոր դարձնող հիմնավորումներ.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետին առաջարկություններ ներկայացնել պետական մարմինների կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված նպատակի իրականացման համար.

3) կատարել այլ գործողություններ՝ ուղղված 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված նպատակի իրականացմանը:

3. Սահմանել, որ լիազորված անձը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը տվյալ եռամսյակի ընթացքում սույն որոշմամբ սահմանված լիազորությունների շրջանակներում կատարված գործողությունների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.02.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ